ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՄԲԻՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

ՌԱԶՄԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇ *

ՀՏԴ 94 *DOI: 10.52063/25792652-2023.2.17-210*

ՌՈԶԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
Ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
rozadavtyan@gmail.com
ORCID: 0009-0000-6185-6695

Սույն հոդվածը, որը ժամանակագրորեն ընդգրկում է 14-րդ դարից մինչև մեր օրերը, նպատակ ունի լուսաբանելու ռազմական ռազմավարության կրած որոշ փոփոխությունները՝ պայմանավորված գիտության և տեխնիկայի զարգացմամբ: Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել ռազմական ռազմավարության ծագումն ու զարգացումը (համառոտ ակնարկ), ցույց տալ ռազմական ռազմավարության զարգացման վրա ազդող որոշ գործոններ, առանձնացնել ռազմական ռազմավարության զարգացման որոշ օրինաչափություններ, որոնք հնարավորություն կտան հասկանալու վերջինիս ժամանակակից միտումները:

Թեև ռազմական ռազմավարության զարգացման պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները սակավ են, սակայն աշխատանքում կիրառված փաստերի համադրման, իրողությունների քննության և համակողմանի ներկայացման համար օգտագործված պատմավերլուծական մեթոդաբանությունը թույլ է տալիս առանձնացնել ռազմական ռազմավարության զարգացման որոշ օրինաչափություններ: Ելնելով ժամանակակից պատերազմների արագ փոփոխվող բնույթից՝ ռազմական ռազմավարության զարգացման օրինաչափությունների համակարգային ներկայացումը հնարավորություն կտա պատրաստվել ոչ թե նախորդ, այլ ապագայի պատերազմներին: Այս ամենի վառ օրինակն է 2020 թվականի Արցախյան պատերազմը, որտեղ ականատես եղանք ժամանակակից պատերազմի պահանջների և պատրաստվածության միջև անհամապատասխանությանը:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ 21-րդ դարում գիտատեխնիկական առաջընթացի, սպառազինությունների թռիչքային զարգացման դարաշրջանում ապագա պատերազմների բնույթի ուսումնասիրությունը կարևորագույն խնդիր է, քանի որ միայն դրա

* Հոդվածը ներկայացվել է 07.04.2023թ., գրախոսվել՝ 12.07.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.07.2023թ.:

արդյունքում կարելի է մշակել ժամանակի պահանջներին համապատասխան ռազմավարություն, իրականացնել զինված ուժերի շինարարություն և ընդհանուր առմամբ պատերազմի պլանավորում ու վարում:

Հիմնաբառեր՝ *ռազմավարություն, ռազմական ռազմավարություն, պատերազմների բնույթի փոփոխություն, ժամանակակից պատերազմներ, ռազմական ռազմավարության օրինաչափություններ, ռազմարվեստի պատմություն, զարգացման միտումներ, ռազմական շինարարություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չնայած մերօրյա զարգացող տեխնոլոգիական աշխարհում պատերազմների բնույթի դինամիկ փոփոխություններին՝ ռազմական ուժը շարունակում է մնալ ամենակիրառվող գործոնը, և հետևաբար ռազմական ռազմավարության ուսումնասիրությունը շարունակում է առանցքային մնալ ռազմական գիտության մեջ:

Ռազմական ռազմավարությունը ռազմարվեստի բաղկացուցիչ բարձրագույն ոլորտն է, ներառում է պետության ռազմական (պաշտպանական) անվտանգության ապահովման, այդ թվում՝ պատերազմի կանխման, ագրեսիայի հետմղման՝ պետության ու ԶՈՒ-ի պատրաստման տեսությունն ու պրակտիկան, ռազմավարական օպերացիաների և ընդհանուր առմամբ պատերազմի պլանավորումն ու վարումը (Չիլինգարյան և Երզնկյան 521-522): Ռազմական ռազմավարությունը, լինելով պետության ռազմական գործունեության հիմքը, ունի ուսումնասիրության առարկա, որն է զինված հակամարտությունը, ինչն էլ կանխորոշում է ռազմական ռազմավարության խնդիրները, որոնցից ամենակարևորներն են.

- պետության պատրաստումը հնարավոր պատերազմին,
- ԶՈՒ-ի ղեկավարումը խաղաղ և պատերազմական ժամանակ,
- պատերազմների բնույթի և ռազմավարական բովանդակության, ռազմական միջոցներով դրանց կանխման ուղիների ուսումնասիրությունը,
- ԶՈՒ-ի շինարարության և պատրաստման պահանջների ձևավորումը,
- պատերազմի վարման եղանակների և ռազմավարական գործողությունների ձևերի մշակումը,
- ԶՈՒ-ի համակողմանի աջակցության պահանջների ձևավորումը (Тихоновский 13-18):

Ռազմական ռազմավարության օրինաչափությունները, ըստ էության, պետական և բարձրագույն ռազմական ղեկավարության ռազմական գործունեության տարրերի և գործընթացների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող, զգալի և կրկնվող կապերն են (Тихоновский 13-18): Ինչ վերաբերում է ռազմական ռազմավարության սկզբունքներին, ապա կարող ենք ասել, որ դրանք ձևավորվում են պատերազմի և զինված պայքարի օրենքների, ռազմական ռազմավարության օրինաչափությունների և խնդիրների հիմքի վրա (Тихоновский 13-18):

Պատերազմների բնույթի փոփոխմամբ՝ նոր խնդիրներ ու պահանջներ են առաջադրվում պետությանն ու մասնավորապես ԶՈՒ-ին: Տեղին է մեջբերել ռուս ականավոր ռազմական տեսաբան Ա. Ա. Սվեչինի խոսքերը, որը դեռևս 1907 թ., բնութագրելով որոշ զինվորականների կարծրատիպային մտածողությունը, գրել է. «Չի կարելի մնալ հին կարծրատիպերի մեջ: Եթե մեր պատկերացումները չփոխվեն ռազմական գործի զարգացմանը համապատասխան, ապա մենք հետզհետե մեր տեսադաշտից բաց կթողնենք երևույթների ողջ էությունը…» (Свечин, *Предрассудки и боевая действительность* 70-71): Այսօր առավել քան արդիական են դարձել ռազմական, այդ թվում՝ ԶՈՒ-ի շինարարության ճիշտ տրամաբանության և խելամիտ պլանավորման դերը, ռեսուրսների ու բյուջեի արդյունավետ գնահատման և օգտագործման նշանակությունը՝ բանակը ժամանակակից պայմաններին,

մարտահրավերներին ու իրողություններին համապատասխանեցնելու նպատակով: Ինչ վերաբերում է ռազմական ռազմավարության բովանդակությունը, ապա այն փոխվում է ռազմական ռազմավարության առարկայի սահմանման, պետական քաղաքականության խնդիրներին և նրա տրամադրության տակ գտնվող ուժերին ու միջոցներին համապատասխան (Соколовский 15):

Գիտության ու տեխնիկայի նոր ձեռքբերումների արդյունքում ժամանակի ընթացքում ռազմական ռազմավարության կրած փոփոխությունները ցույց տալու նպատակը ռազամական ռազմավարության միտումների բացահայտումն է:

Ռազմական տեսաբան Հելմուտ Կարլ Բեռնհարդ Մոլտկե Ավագն ասում է. «Չի կարելի անուշադրության մատնել նախկինում տեղի ունեցած պատերազմների փորձը, բայց այն չի կարող չափանիշ լինել ներկայի համար: Մեզ այդ պատերազմներից տասնամյակներ և նույնիսկ հարյուրամյակներ են բաժանում, որոնց ընթացքում փոխվել է ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմավարական իրավիճակը… Այդ իսկ պատճառով ցանկալի արդյունքի հասնելու համար մեկ միջոց է մնում՝ փորձել գուշակել ապագա իրադարձությունների ընթացքը և խորամուխ լինել ժամանակակից իրավիճակի մեջ» (Шапошников):

2020 թ. Արցախյան պատերազմը այն վառ օրինակն է, որը ցույց տվեց, որ պետք է պատրաստվել ոչ թե նախորդ, այլ ապագա պատերազմին:

Ռազմական ռազմավարության ծագումն ու զարգացումը (համառոտ ակնարկ)

Ռազմական ռազմավարության ծագումն անմիջական կապ ունի առաջին պետությունների և բանակների ստեղծման հետ: Այն ձևավորվել է աստիճանաբար՝ կապված հասարակության ու տնտեսության զարգացման, նոր զինատեսակների ու տեխնիկայի ստեղծման և, իհարկե, պատերազմավարության փորձի հետ: Վերոնշյալ գործոնների բոլոր փոփոխությունները հանգեցրել են ռազմական ռազմավարության բնութագրերի և բովանդակության փոփոխության:

Եգիպտոսից, Ասորեստանից, Մարաստանից, Բաբելոնից և հնագույն այլ պետություններից մեզ հասած փաստերը ցույց են տալիս, որ արդեն մ.թ.ա. 13-րդ դ. պատերազմներն ընթանում էին մեծ մասշտաբներով (մեծաթիվ զորք, մեծ տարածու-թյուններ, մեծաքանակ սպառազինություն), սակայն այդ ժամանակներից մինչև 14-րդ դար՝ Եվրոպայում հրազենի հայտնվելը, սպառազինությունն այնքան էլ շատ չի փոխվել թե՛ տեսականու, թե՛ արդյունավետության տեսանկյունից: Այդ պատճառով էլ պատերազմ վարելու մեթոդները շատ առումներով նման էին: Սակայն հրազենի ի հայտ գալուց հետո այդ շրջանն ավարտվեց, ու սկսվեց նորը՝ մշտական փոփոխությունների շրջանը սկզբում սպառազինություններում, իսկ հետո՝ պատերազմավարության մեթոդներում (Фиске): Բրիտանացի ռազմական տեսաբան Կինգստոն Մակլորին նշում է. «Պատերազմի և պատերազմավարության եղանակների փոփոխության վրա ամենաշատը ազդում է զենքի թե՛ հարձակողական, թե՛ պաշտպանողական կատարելագործումը» (Матвиенко):

14-րդ դարում հնարավորություն առաջացավ օգտագործելու վառոդի էներգիան. ստեղծվեց հրաձգային զենքը, որը հանգեցրեց ինչպես ասպետական դասի վերացմանը, այնպես էլ պատերազմավարության եղանակների փոփոխությանը: Եվրոպական ռազմարվեստում հեղաշրջում տեղի ունեցավ: Եթե ասպետական զորքերը հակառակորդին գրոհում էին գծային կամ սեպաձև շարվածքով, ապա հետևակի դերի և արտադրական ուժերի մեծացման հետևանքով փոխվեց մարտական կարգը, հետևակը սկսեց շարվել կարե (զորքի քառանկյուն դասավորություն) մարտակարգով, քանի որ հրազենային կրակը մեծ ճշգրտություն չուներ: Կարեն հնարավորություն տվեց մեծացնել կրակի խտությունը և կրակի կենտրոնացում իրականացնել:

15-17-րդ դարերում էական փոփոխության է ենթարկվում հրազենը, փոքրանում են զանգվածը, տրամաչափը, մեծանում է կրակի ճշգրտությունը, որն էլ հանգեցնում է կարեի՝ որպես մարտական կարգի վերացմանը, ի հայտ է գալիս գծային մարտակարգը: Մարտավարությունում տեղ գտած փոփոխությունները հանգեցնում են զորքերի կարգապահության բարձրացման, զինվորների և սպաների որակյալ կրության պահանջների աճի: Բրիտանացի պատմաբան Մ. Ռոբերտսը այս առիթով նշում է, որ բանակն այլևս ո՛չ շվեյցարացիների կոշտ զանգված էր, և ո՛չ էլ միջնադարյան ագրեսիվ արհեստավարժ անհատների խումբ, այն լավ կազմակերպված օրգանիզմ էր, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ ենթարկվում էր վերևից եկող ազդակներին (Пенской): Բանակի գործողությունները զարգանում էին գլխավորապես մեկ ռազմավարական ուղղության վրա: Ստեղծվում են մշտական բանակներ, որոնք բավական ծախսատար էին, այդ պատճառով էլ ռազմավարության էությունը հակառակորդի ամրոցների գրավման և հաղորդակցման ուղիներում հմուտ տարաշարժի մեջ էր (Конышев и Сергунин 31):

XVIII դարում բուրժուական հեղափոխությունների արդյունքում ձևավորված արտադրական հարաբերությունները զարկ տվեցին արտադրական ուժերի և տեխնիկայի զարգացմանը, սկիզբ դրվեց մեքենայական արտադրությանը, հայտնվեցին գործազուրկ մարդկանց մեծաթիվ խմբեր, որոնց հնարավոր եղավ ներգրավել զինվորական ծառայության մեջ: Բարենպաստ և օբյեկտիվ պայմաններ են առաջանում զանգվածային բանակների ստեղծման համար: Զանգվածային բանակներ ստեղծելու հնարավորությունից առաջինն օգտվեց Նապոլեոնը՝ որդեգրելով պատերազմների վարման ռազմավարության ջախջախիչ բնույթը: Սրան նպաստեցին ինչպես հարձակման միջոցների (ձիեր, կենդանի ուժ և հրազեն) առկայությունը, այնպես էլ այդ միջոցների շարժունակությունը (Маркс и Энгельс 506): Ստեղծելով հեղափոխական բանակ՝ նա պարտության է մատնում իր հակառակորդներին: Արդեն գլխավոր ճակատամարտն էր որոշում ռազմավարության բնույթը, և պատահական չէ, որ Նապոլեոնի ռազմավարությունը, որը ջախջախիչ բնույթ ուներ, ստացավ գլխավոր ճակատամարտի ռազմավարություն անվանումը (Строков, *История военного искусства, Военное издательство, т. 3* 22): Այն հիմնականում ուղղված էր հակառակորդի կենդանի ուժի ոչնչացմանը: Նապոլեոնյան հարձակողական ռազմավարության հիմքում մեծ ուժերի կուտակումն էր, դրանց տարաշարժունությունը, հարձակման վճռականությունը (Свечин, *Эволюция военного искусства* 341-343):

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հասարակության արտադրական ուժերի արագ աճի արդյունքում զինված պայքարի պայմաններն էականորեն փոխվեցին: Արդյունաբերության և տնտեսության հետագա զարգացումը նախադրյալ հանդիսացավ զենքի քանակի, որակի բարձրացման համար: Ռազմական գործողությունների թատերաբեմերում հայտնված բազմամիլիոնանոց բանակները, ինչպես նաև սպառազինության և մարտական տեխնիկայի որակական և քանակական ավելացումը կտրուկ փոխեցին պատերազմի, ճակատամարտի և մարտի բնույթը: Ռազմական գործողությունների թատերաբեմում հայտնված զանգվածային բանակներն այլևս անկարող էին մեկ գլխավոր ճակատամարտով որոշել պատերազմի ելքը, պատերազմը բաժանվում է մի շարք ճակատամարտերի, և արդեն 1866 թ. ավստրոպրուսական և 1871-ին ֆրանս-պրուսական պատերազմներում ակնհայտորեն երևում են օպերատիվ արվեստի սաղմերը: Սրան, իհարկե, մեծապես նպաստեցին երկաթգծի և հեռագրակապի հայտնագործումը:

Համաշխարհային տնտեսության հետագա զարգացումը հնարավորություն ստեղծեց զգվածային բանակներ ունենալու ու ուժերի կենտրոնացման սկզբունքը գործարկելու համար: Երկաթուղիների լայն կիրառմամբ հնարավոր էր մարդկային մեծաքանակ խմբերը համեմատաբար կարճ ժամանակահատվածում հասցնել ռազմական գործողությունների թատերաբեմ (Knox and Murray 9): Որպես արդյունք՝

առաջին համաշխարհային պատերազմը ժխտեց 19-րդ դարի փորձի վրա հիմնված նախկին ռազմավարական տեսություններն այն մասին, որ հաղթանակի կարելի է հասնել մեկ կամ մի քանի գլխավոր ճակատամարտերով: 1914 թ. ռազմական գործողությունների ընթացքը ցույց տվեց հակամարտող կողմերի ռազմավարական հաշվարկների փլուզումը: Պատերազմը զարգանում էր ոչ այնպես, ինչպես պատկերացնում էին ժամանակի քաղաքական և ռազմական ղեկավարությունները: Արդեն 1915-17 թվականներին պատերազմող կողմերը, չիմանալով սպասվող պատերազմի բնույթը, բախվեցին դիրքային փակուղու, քանի որ պաշտպանության և հարձակման ուժերը հավասար էին, այսինքն՝ հարձակվող հակառակորդը չէր կարողանում այլևս ճեղքել պաշտպանությունը: Սրան մեծապես նպաստեց զորքերում գնդացիրների և պահուսակավոր հրացանների մեծաքանակ ներդրումը (Соколовский 324): Ռազմական ռազմավարությունը կանգնեց առաջացած դիրքային փակուղուց դուրս գալու խնդրի առաջ: Մշակվեց գրոհող խմբերի մարտավարությունը, ստեղծեցին տանկեր, ինքնաթիռներ (սկզբում կիրառվում էին հետախուզության համար, հետո նաև՝ օդային մարտերի և ռմբանետումների): Որպես ստեղծված իրավիճակի պատասխան՝ առաջացան նոր զորատեսակներ՝ հակաօդային պաշտպանություն, հակատանկային պաշտպանություն և ապահովման նոր տեսակ՝ օպերատիվ քողարկում, սկսեցին մշակվել զորքերի (ուժերի) կիրառման տարատեսակ կոնցեպցիաներ: Զորքերի ռազմավարական կառավարման ոլորտում ևս փոփոխություններ տեղի ունեցան, պատերազմի ընթացքում առաջացան նոր ռազմավարական միավորումներ՝ ռազմաճակատներ (բանակային խմբեր), մեծացավ ռազմավարական պահուցների և դրանց հմուտ կիրառման դերը: Միջպատերազմական ժամանակաշրջանում մշակվեցին մեքենայացված զորքերի կիրառման, օդում գերակայության, բլիցկրիգի, խոր հարձակողական օպերացիաների տեսությունները, որոնք օգտագործվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (Строков, *История военного искусства* 326-333): Խոր հարձակողական օպերացիաների տեսությունը մինչ օրս էլ կիրառելի է: Գերմանիան մշակեց «տոտալ և կայծակնային պատերազմի» ռազմավարությունը, որի հիմքում նոր զորատեսակների՝ ավիացիայի և տանկերի համատեղ գործունեությունն էր (Конышев и Сергунин 35):

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջուկային զենքի ի հայտ գալը էապես փոխեց պատերազմների վարման եղանակների և միջոցների մասին պատկերացումները: Նոր զինատեսակը ստիպեց որդեգրել ՁՈՒ-ի շինարարության նոր սկզբունքներ, փոխվեց զորատեսակների հարաբերակցությունը, առաջացավ ՁՈՒ-ի նոր տեսակ՝ հրթիռային զորքեր, մեծացվեցին գումարտակների և գնդերի միջև հեռավորությունները, զորքերի տեղակայման շրջանները: Սա հատկապես պայմանավորված էր միջուկային զենքի խոցման շառավղի մեծությամբ: Ռազմական գործողությունների և պատերազմի թափը մեծացավ: Կապված միջուկային զենքի ավերիչ հետևանքների հետ՝ պետությունները որդեգրեցին «միջուկային զսպման» ռազմավարություն:

Սառը պատերազմի տարիներին՝ սկսած 1973 թ.-ից, ԱՄՆ-ում սկսվեցին մշակվել օպերացիայի վարման նոր եղանակներ, որը ստացավ օդացամաքային օպերացիաներ անվանումը: Սրա էությունը այն էր, որ օդուժով, հրթիռային զորքերով և գերճշգրիտ զենքերով և բարձր տարաշարժունությամբ զորքերով միաժամանակյա հարված պետք է հասցվեր օդով և ցամաքով հակառակորդի զորքերի օպերատիվ շարվածքի ամբողջ խորությամբ: Այս շրջանում մշակվեց ԴԿՈՁ (OODA) (Observe-դիտիր, Orient-կողմնորոշվիր, Decide-որոշիր, Act-ձեռնարկիր) տեսությունը, որը ենթադրում էր տվյալների արագ հավաքում, համապատասխան որոշումների ընդունում (գրոհի հրամանների արձակում), հետո արդյունքների վերլուծություն ու կրկին գործողություն (Алексеевич 15; Савин): Հետագայում զորքերի կառավարման ավտոմատացված համակարգի, գերճշգրիտ զինատեսակների, տիեզերական ուղեծրային խմբավորումների զարգացումը պայմանավորեցին բոլոր ուժերը մեկ

ցանցում միավորելու հնարավորությունը, և առաջացան ցանցակենտրոն գործողություններն ու պատերազմները (այսուհետև ՑԿԳ և ՑԿՊ)[1]:

Այսօր պատերազմները էականորեն տարբերվում են անցյալի պատերազմներից, քանի որ պետությունների կանոնավոր բանակները շատ հաճախ բախվում են ոչ պետական դերակատարների և գրեթե բոլոր տեղերում պետությունները պարտվում են կամ կրում անդառնալի ու կործանարար կորուստներ: Ժամանակակից պատերազմները բնութագրվում են որպես բարդ և երկարատև, ունեն խիստ ապակենտրոնացված բնույթ, դրանք հաճախ վարվում են հոգեբանական և տեղեկատվական պատերազմի տարրերի կիրառմամբ, դրանցում օգտագործվում են բոլոր հնարավոր ոլորտները՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, ռազմական, բավական ակտիվ է ահաբեկչական գործոնը, կիրառվում է պարտիզանական պայքարի մարտավարություն և այլն (Պետրոսյան 12): Վ. Սլիպչենկոն իր «Ինչպիսի պատերազմի պետք է պատրաստվեն զինված ուժերը» հոդվածում ասում է, որ մեծ քանակով գերճշգրիտ զենքերի կիրառումով պայմանավորված՝ ապագայի պատերազմները անշփում պատերազմներ են լինելու, որոնց էլ պետք է պատրաստվեն պետությունների զինված ուժերը (Слипченко):

Այսպիսով, դիտարկելով պատմական ժամանակաշրջանները պատերազմավարության առանձնահատկությունների տեսակետից՝ կարող ենք նշել, որ ռազմական ռազմավարության զարգացումը օրինաչափ է ընթացել: Ըստ այդմ, կարելի է առանձնացնել ռազմական ռազմավարության զարգացման հետևյալ օրինաչափությունները, որոնք դրսևորվել են բոլոր ժամանակներում.

- ռազմական ռազմավարության զարգացումը տեղի է ունենում ռազմական գործունեության ոլորտի օբյեկտիվ զարգացումը արտացոլող տարրերի և կապերի առաջացման, տրանսֆորմացիայի (կերպափոխման) կամ անհետացման միջոցով,
- ռազմական ռազմավարության զարգացումը հանգեցնում է որակապես նոր իրավիճակի առաջացման, որը բնորոշվում է կազմակերպման առավել բարձր մակարդակով,
- զարգացման գործընթացում ռազմական ռազմավարության ձևավորվող նոր էությունը սահմանում է ամբողջ ռազմական գործունեության կազմումն ու կազմակերպումը:

---

[1] ՑԿԳ-ն Աֆղանստանում և Իրաքում. Աֆղանստանում «Անսկուն ազատություն, 2001-2002» (Operation Enduring Freedom, 2001-02), ինչպես նաև «Ազատություն Իրաքին» (Operation Iraqi Freedom, 2003) ռազմական գործողությունները իրական մարտական պայմաններում ՑԿՊ տեսության և ՑԿԳ հայեցակարգի արդյունավետության գնահատման փորձադաշտ հանդիսացան: «Անսկուն ազատություն» գործողության ժամանակ ցանցակենտրոն հնարավորությունները շատ կարևոր էին ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության (USCENTCOM) որոշումների պատրաստման և ընդունման համակարգում և զգալի ազդեցություն ունեցան հակառակորդի արագ ջախջախման գործում՝ ՈԳԹ-ի ամբողջ խորությամբ: Հեշտորեն հաջողվում էր խոցել հակառակորդին իր մշտական տեղակայման կետերից շարժման հենց սկզբում: Իրաքում ցանցակենտրոն գործողությունների արդյունավետության գնահատումն իրականացրած բրիգադի գեներալ Դենիս Մորանը, որն այն ժամանակ «USCENTCOM J-61» ծառայության տնօրենն էր, նշում էր. «Տեղերում կիրառված տեխնոլոգիաների շնորհիվ հնարավոր դարձավ տեղեկատվության արագ փոխանակումը հրամանատարական և կառավարման բոլոր մակարդակներում: Հետախուզության արդյունքները սենսորներից վերլուծաբաններին, որոշումներ ընդունողներին կամ անմիջապես հրձիգին արագ հասցնելու կարողությունը գերազանցում էր այն ամենը, ինչ մենք երբևէ տեսել էինք... Մենք ստուգեցինք և հաստատեցինք ցանցակենտրոն պատերազմի հայեցակարգի արդարացիությունը և կողմնորոշվեցինք հաղորդակցային միջոցներին, հրամաններին և կառավարմանը, հետախուզմանը, հսկմանը և մարտական գործողություններից առաջ հակառակորդի տարածքի հետախուզմանը ներկայացվող մեր պահանջներում»:

Եզրակացություն

21-րդ դարում գիտատեխնիկական առաջընթացի, սպառազինությունների թռիչքային զարգացման դարաշրջանում հակառակորդին զանգվածային հարվածներ կարելի է հասցնել ոչ միայն միջուկային զենքի կիրառմամբ, այլև ժամանակակից գերճշգիրտ զինատեսակներով, նոր ֆիզիկական սկզբունքներով գործող զենքերով: Այսօր կապի, հետախուզության և կառավարման ավտոմատացված համակարգերի կատարելագործումը հնարավորություն է տալիս մարտը վարելու իրական ժամանակում: Արհեստական բանականությամբ աշխատող սարքավորումների, կապի և կառավարման ռոբոտացված, տիեզերական համակարգերի, ԱԹԱ-ների, ստորջրյա միջոցների, կրակային խոցման մեքենայցված համակարգերի միջոցով կարելի է հրաժարվել կենդանի ուժի, սպառազինության ռազմաճակատում զանգվածային կենտրոնացման սկզբունքից: Ռազմաճակատ հասկացությունն էլ ինքնին ավելի պայմանական է դառնում (Конышев и Сергунин 86): Ժամանակակից պատերազմների փորձը ցույց է տալիս, որ ապագայի զինված հակամարտություններին բնորոշ են լինելու բարձր լարվածությունը, մեծ ծավալները, օդացամաքային, տիեզերական տիրույթների ընդգրկումը, իրավիճակի կտրուկ և շրջադարձային փոփոխությունը (Зарудницкий 34-44): Ըստ վերջին տասնամյակների պատերազմների ու զինված հակամարտությունների ուսումնասիրությունների՝ հնարավոր է դառնում առանձնացնել դրանց բնույթի փոփոխման կարևորագույն միտումները, որոնցով պայմանավորված էլ փոխվելու են նաև ռազմական ռազմավարության խնդիրները:

1. Էապես մեծանում է օդատիեզերական տիրույթում գործող զորքերի, ուժերի և միջոցների դերն ու նշանակությունը:
2. Պատերազմներում էլ ավելի է մեծանալու տեղեկատվական տեխնոլոգիաների դերը, պատերազմի տեղեկատվական բաղադրիչը:
3. Ռազմական գործողությունների (պատերազմի կամ առանձին օպերացիաների) վարմանն ուղղված ժամանակի կրճատում, որն առաջին հերթին արտահայտվում է ռազմագործողության պատրաստման համար ժամանակի կրճատումով:
4. Մեծանում է ռազմական գործողությունների արագընթացությունը՝ պայմանավորված ժամանակակից կապի և հաղորդակցման միջոցների կիրառման, ինչպես նաև առավել տարաշարժուն զորամիավորումներ ունենալու հետ (Зарудницкий 34-44; Кузьмин и Фролов 36-41; Сержантов 45-54; Captain Gerard Roncolato, https://goo.su/nSuYyA Accessed 15.03.23):

Ըստ վերը նշվածից ակնհայտ է դառնում, որ 21-րդ դարի պատերազմներում անհրաժեշտ է ապակենտրոնացված կառավարում, օդային գերակայության նվաճման հարցը դառնում է առաջնային, կրճատվում է մարտական խնդրի կատարման, կառավարման և որոշումների կայացման ժամանակը, որոշակիորեն աղոտանում են հարձակման և պաշտպանության միջև տարբերությունները, ռազմաճակատի շփման գիծը հստակ չէ կամ հաճախ ուղղակի չկա, նվազում է փողային հրետանու, ծանր զրահատեխնիկայի, ցամաքային զորքերի դերակատարությունը, մեծանում է ԱԹԱ-ների, ավիացիայի, օդատիեզերական ուժերի, գերճշգրիտ զինատեսակների, հեռահար հրթիռային և ռեակտիվ միջոցների դերն ու կիրառությունը:

Հետևաբար պետության ԶՈՒ-ի կազմակերպումը պետք է փոփոխվի և հարմարեցվի նոր ժամանակաշրջանի պահանջներին, այդ թվում՝ նաև հայեցակարգային նշանակություն ունեցող փաստաթղթերը, ինչպիսին է պետության ԶՈՒ ռազմական դոկտրինը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա ունենալով սահմանափակ ռեսուրսներ և մշտապես արտաքին անվտանգային խնդիրներ՝ ՀՀ ռազմական շինարարության խնդիրը եղել և մնում է առաջնահերթություն: Մեր ռազմական ոլորտում միշտ էլ գերակա են պաշտպանական քաղաքականությունը,

ինչպես նաև դրանով պայմանավորված պասիվ պլաններն ու հայեցակարգերը, մինչդեռ աշխարհի առաջատար բանակներն այսօր հրաժարվում են ստատիկ, պասիվ պաշտպանության եղանակից՝ նախապատվությունը տալով ակտիվ, դինամիկ և տարաշարժուն պաշտպանությանը:

Մեր կարծիքով, ժամանակակից պատերազմների բնույթով պայմանավորված՝ անհրաժեշտ է զարգացնել արհեստական բանականությամբ ղեկավարվող գերճշգրիտ զենքերը և միջոցները, հատուկ օպերացիաների ուժերը, ինչպես նաև մեծ կարևորություն տալ տեղեկատվական պայքարի միջոցների զարգացմանը՝ հաշվի առնելով դրանց մեծ ազդեցությունը հակառակորդի ինչպես կառավարման համակարգերի, այնպես էլ հասարակության վրա, քանի որ տեղեկատվական զենքի կիրառմամբ հնարավոր է լինում «արձակել» հզոր նյութաէներգետիկ գործընթացներ, որոնք նպաստում են կողմերից մեկի նպատակին հասնելուն (Требин 738), ՌԷՊ-ը, հետախուզական ենթակառուցվածքները, որոնց խնդիրը կլինի հակառակորդի կառավարման համակարգի և թիկունքի կազմալուծումը, նրա տնտեսությանն ու գլխավոր հարվածային խմբավորմանն անընդունելի վնասի հասցնումը, ինչի հետևանքով բնակչությունն ու զինված ուժերը կբարոյալքվեն, քանի որ կզգան սեփական անզորությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Չիլինգարյան, Դավիթ և Երզնկյան, Լևոն, *Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական բառարան,* Երևան, 2015:
2. Պետրոսյան, Մարգարիտա, *Պատերազմի սերունդներ. Պատերազմի զարգացումը արդի փուլում*: «ՀԲ», 2021, հմ. 1:
3. Зарудницкий, Владимир, *Характер и содержание военных конфликтов в современных условиях и обозримой перспективе,* Военная мысль, 2021, № 1
4. Ивлев, Алексей, *Основы теории Бойда. Направления развития, применения и реализации,* М., 2008.
5. Конышев, Валерий и Сергунин, Александр, *Современная военная стратегия,* М., 2014.
6. Кузьмин, Владимир и Фролов, Николай, *Прогноз тенденций развития содержания и характера военных конфликтов будущего и оценка их влияния на военно-космическую деятельность в мире в 21 веке,* Вестник академии военных наук, 2021, № 1.
7. Матвиенко, Юрий, *Исследование феномена войны,* https://goo.su/wA7f3R
8. Маркс, Карл и Энгельс, Фридрих, *Сочинения,* изд. 2, т. .
9. Пенской, Виталий, *Великая огнестрельная революция,* Эксмо, Яуза, 2010, http://loveread.ec/view_global.php?id=53906
10. Савин, Леонид, *Пять стратегических колец Уордена и петля Бойда НОРД,* https://goo.su/7bVUzn
11. Свечин, Александр, *Предрассудки и боевая действительность,* Российский военный сборник, вып. 15, Военный университет, 1999.
12. ---, *Эволюция военного искусства,* М., 2017.
13. Семенов, Василий, *Краткий очерк развития советского оперативного искусства,* М., Военное издательство, 1960.
14. Сержантов, Александр, *Трансформация содержания войны: от прошлого к современному,* Военная мысль, 2021, № 1.
15. Слипченко, Владимир, *К какой войне должны готовиться вооруженные силы.* https://goo.su/czMGo
16. Соколовский, Василий, *Военная стратегия,* М., 1963 .
17. Строков, Александр, *История военного искусства,* М., 1966.

18. ---, *История военного искусства.* М., Военное издательство, т. 3, 1967.

19. Тихоновский, Петр, *Военная стратегия как основа военной теории и практики,* «Наука и военная безопасность», № 1, 2003 .

20. Требин, Михаил, *Терроризм в 21 веке,* Минск, 2004.

21. Фиске, Брэдли, *Искусство ведения войны. Эволюция тактики и стратегии,* https://goo.su/FQ8t

22. Шапошников, Борис, *Мозг армии,* Военгиз, М.,1927-1929, https://goo.su/crBTDh4

23. Captain, Gerard, Roncolato,*The Character of War Is Constantly Changing,* Proceedings May 2022, Vol. 148/5/1,431, https://goo.su/nSuYyA

24. MacGregor, Knox and Williamson, Murray, *The Dynamics of Military Revolution, 1300–2050*, Cambridge university press, 2009.

WORKS CITED

1. Chilingaryan, Davit ev Erznkyan, Levon, *Pashtpanakan anvtangajin terminneri bacatrakan bararan [Defense Security Explanatory Unabridged Dictionary],* Erevan 2015. (in Armenian).

2. Petrosyan, Margarita, *Paterazmi serundner. Paterazmi zargacumy ardi pulum, [Generations of War: Development of War at the Current Stage],* «HB», 2021, hm. 1: (in Armenian).

3. Zarudinskij, Vladimir, *Harakter i soderzhanie voennyh konfliktov v sovremennyh usloviyah i obozrimoj perspective [Character and Content of Military Conflicts in Modern Conditions and Foreseeable Perspective],* Voennaya mysl', 2021, № 1. (In Rissian).

4. Ivleev, Aleksej, *Osnovy teorii Bojda. Napravleniya razvitiya, primeneniya i realizacii [Basic Theory of Boyd. Directions of Development, Application and Implementation],* M., 2008. (In Russian).

5. Konyshev, Valerij, Seregunin Aleksandr, *Sovremennaya voennaya strategiya [Modern Military Strategy],* M., 2014. (In Russian)

6. Kuz'min, Vladimir I Frolov, Nikolaj, *Prognoz tendencij razvitiya soderjaniya I haraktera voennyh konfliktov budusshego i ocenka ih vliyaniya na voenno-kosmicheskuyu deyatel'nost' v mire v 21 veke [Prognosis of Development Trends in the Content and Character of Future Military Conflicts and Assessment of their Influence on Military-Space Activities in the World in the 21st Century],* Vestnik akademii voennyh nauk, 2021, № 1. (In Rissian).

7. Matvienko, Yurij, *Issledovanie fenomena vojny [Study of the Phenomenon of War].* (In Russian). https://goo.su/wA7f3R

8. Marks, Karl I Yengel's, Fridrih, *Sochineniya [Collected Works],* izd. 2, t. 7. (In Russian).

9. Penskoj, Vitalij, *Velikaya ognestrel'naya revolyuciya [The Great Gun Revolution],* Jeksmo, Yauza, 2010. (In Russian). http://loveread.ec/view_global.php?id=53906

10. Savin, Leonid, *Pyat' strategicheskih kolec Uordena i petlya Bojda NORD Warden's [Five Strategic Rings and Boyd's OODA Loop].* (In Russian). https://goo.su/7bVUzn

11. Svechin, Aleksandr, *Predrassudki I boevaya dejstvitel'nost' [Prejudice and Combat Reality],* Rossijskij voennij sbornik, vyp. 15, Voennyj universitet, 1999. (In Russian).

12. Svechin, Aleksandr, *Yevolyuciya voennogo iskusstva [The Evolution of Military Art],* M., 2017. (In Russian).

13. Semyonov, Vasilij, *Kratkij ocherk razvitiya sovetskogo operativnogo iskusstva [Brief Outline of the Development of Soviet Operational Art],* M., Voennoe izdatel'stvo, 1960. (In Russian).

14. Serzhantov, Aleksandr, *Transformaciya soderzhaniya vojny: ot proshlogo k sovremennomu [Transformation of the Content of War: from the Past to the Present],* Voennaya mysl', 2021, № 1. (In Rissian).

15. Slipchenko, Vladimir, *K kakoj vojne dolzhny gotovit'sya vooruzhennye sily [What kind of War should the Armed Forces Prepare for].* (In Russian). https://goo.su/czMGo

16. Sokolovskij, Vasilij, *Voennaya strategiya [Military Strategy],* M., 1963. (In Russian)

17. Strokov, Aleksandr, *Istoriya voennogo iskusstva [History of Military Art],* M., 1966. (In Russian)

18. Strokov, Aleksandr, *Istoriya voennogo iskusstva [History of Military Art],* M., Voennoe izdatel'stvo, t.3, 1967. (In Russian)

19. Tihonovskij, Pyotr, *Voennaya strategiya kak osnova voennoj teorii I praktiki [Military Strategy as the Basis of Military Theory and Practice]*, «Nauka I voennaya bezopassnost', № 1, 2003 .(In Russian)

20. Trebin, Mihail, *Terrorizm v 21 veke [Terrorism in the 21st century],* Minsk, 2004. (In Rissian)

21. Fiske, Bredli*, Iskusstvo vedeniya vojny. Jevolyuciya taktiki I strategii [The Art of Fighting. Evolution of Tactics and Strategy].* (In Russian). https://goo.su/FQ8t

22. Shaposhnikov, Boris, *Mozg armii [Army Brain],* Voengiz, M., 1927-1929. (In Russian), https://goo.su/crBTDh4

THE HISTORY OF MILITARY STRATEGY AS A GUIDELINE FOR ITS DEVELOPMENT

ROZA GASPARYAN
Ministry of Defense of the Republic of Armenia,
National Defense Research University,
Center for Research on the History of Military Art, Research Fellow;
Yerevan, the Republic of Armenia

This article aims to cover some of the changes of military strategy that have undergone due to the development of science and technology from the 14th century to the present day. The following issues arise from the purpose of the article: to present the origin and development of military strategy (a brief overview), to show some factors affecting the development of military strategy, to identify some patterns of military strategy development, which will enable understanding its modern trends.

Although there are few studies on the history of the development of military strategy, the historical-analytical methodology used in the work to combine the facts, examine the realities and comprehensively present them, allows us to distinguish some patterns of the development of the military strategy. Based on the rapidly changing nature of modern wars, a systematic presentation of patterns of military strategy development will enable preparation not for previous wars, but for future ones. A vivid example of all this is the Artsakh war of 2020, where we witnessed the discrepancy between the requirements and preparation of modern warfare.

As a result of the study, we came to the conclusion that in the 21st century, in the era of scientific and technical progress, the rapid development of weapons, the study of the nature of future wars is an important issue, because only as a result of this, it is

possible to develop a strategy in accordance with the requirements of the time, carry out the construction of the armed forces, war planning. and waging in general.

Key words: *strategy, military strategy, changes in the nature of wars, modern wars, patterns of military strategy, history of military art, development trends, military construction.*

ИСТОРИЯ ВОЕННОЙ СТРАТЕГИИ КАК ОРИЕНТИР ЕЕ РАЗВИТИЯ

РОЗА ГАСПАРЯН
Ученый-аналитик Центра исследований истории военного исксусства Национального оборонно-исследовательского университета Министерства обороны Республики Армения, г. Ереван, Республика Армения

Данная статья, содержание которой хронологически охватывает период с 14 века до наших дней, призвана осветить некоторые изменения военной стратегии, произошедшие в связи с развитием науки и техники. Из цели исследования вытекают следующие задачи: представить зарождение и развитие военной стратегии (краткий обзор), показать некоторые факторы, влияющие на развитие военной стратегии, выявить некоторые закономерности развития военной стратегии, что позволит понять его современные тенденции.

Несмотря на то, что исследований по истории развития военной стратегии немного, использованная в работе историко-аналитическая методология объединения фактов, изучения реалий и комплексного их представления позволяет выделить некоторые закономерности развития военной стратегии. Исходя из быстро меняющегося характера современных войн, систематическое изложение закономерностей развития военной стратегии позволит анализировать не прошлые войны, а подготовиться к будущим. Ярким примером сказанного является Арцахская война 2020 года, где мы стали свидетелями несоответствия требований и подготовки современной войны.

В результате исследования мы пришли к выводу о том, что в 21 веке, в эпоху научно-технического прогресса, стремительного развития вооружений, изучение характера войн будущего является актуальным вопросом, поскольку только в результате этого появляется возможность разработки стратегии в соответствии с требованиями времени, осуществления строительства вооруженных сил, планирования и ведения войны в целом.

Ключевые слова: *стратегия, военная стратегия, изменение характера войн, современные войны, закономерности военной стратегии, история военного искусства, тенденции развития, военное строительство.*